**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ**
**ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**
**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

---

*11 հոկտեմբեր 2024թ.* *ք. Երևան*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-06**
**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Սոնա Խալաֆյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի, Հարութ Ակլունցի կազմով, 2024թ. հոկտեմբերի 11-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը իր՝ 13.09.2024թ. որոշմամբ, սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ուսումնասիրելով հավակնորդներ Նարինե Ազարյանի, Տիգրան Բաբիկյանի, Ժիրայր Կարապետյանի, Արսեն Մանուկյանի, Արմեն Մարուխյանի ներկայացրած հայտերը՝ Խորհուրդը

**Պ Ա Ր Զ Ե Ց**

Նարինե Ազարյանի, Տիգրան Բաբիկյանի, Ժիրայր Կարապետյանի, Արսեն Մանուկյանի, Արմեն Մարուխյանի ներկայացրած փաստաթղթերն ամբողջական են և

համապատասխանում են Խորհրդի 13.09.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ մասերը՝ Խորհուրդը

**ՈՐՈՇԵՑ**

1. Հաստատել Նարինե Ազարյանի հայտը,
2. Հաստատել Տիգրան Բաբիկյանի հայտը,
3. Հաստատել Ժիրայր Կարապետյանի հայտը,
4. Հաստատել Արսեն Մանուկյանի հայտը,
5. Հաստատել Արմեն Մարուխյանի հայտը,
6. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հարցազրույցի փուլը (այսուհետ՝ Հարցազրույց) անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում, ԱԺ վարչական շենքում,
7. Հարցազրույցի տևողությունը յուրաքանչյուր հավակնորդի համար սահմանել մինչև մեկուկես ժամ,
8. Սահմանել հավակնորդների Հարցազրույցի փուլի հերթացուցակը ըստ այբբենական կարգի,

**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ**

**ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ**

**ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ**

**ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ**